ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Էքսպեր. և կլինիկ. բժշկ. հանդես

II, № 6, 1962

Журн. экспер. и клинич. медицины

Պրոֆ. Ա. Մ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սեպտեմբերի 21-ին ծանր հիվանդությունից հետո վախճանվեց ակադ. Լ. Ա. Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտի դիրեկտոր, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, բիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արարատ Մարտինի Ալեքսանյանը։



Ա. Մ. Ալեքսանյանը ծնվել է 1907 թվականին, Բաթումի քաղաքում, ուր և անցել է նրա մանկությունը։ 1928 թվականին նա հաջողությամբ ավարտելով Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը, երկու տարուց հետո ուղարկվել է ակադ. Լ. Օրբելու մոտ, Լենինգրադի ասպիրանտուրա, որն ավարտելուց հետո մոտ 25 տարի աշխատել է Լենինգրադի ֆիզիոլոգիական գիտահետազոտական տարբեր հիմնարկներում։ Հանդիսանալով ակադ. Օրբելու աշակերտը, նա, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, շնորհիվ իր տաղանդի ու աշխատասիրության, կարողացավ դառնալ այդ դպրոցի աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկը և երկար տարիների ընթացքում բեղմնավոր գիտական աշխատանքը հաջողությամբ զուգորդում էր կազմակերպչական գործունեության հետ Լենինգրադի ակադ. Լ. Օրբելու կողմից գլխավորող ֆիզիոլոգիական տարբեր գիտական հիմնարկներում։

Պրոֆ. Ա. Մ. Ալեքսանյանի գիտական գործունեությունը բնորոշվում է հետևողականությամբ, նպատակասլացությամբ և փորձառական մեծ հմտությամբ։ Նրա առաջին աշխատանքները նվիրված են ցածրակարգ ողնաշարավոր կենդանիների պայմանական-ռեֆլեկտոր ռեակցիաների մեխանիզմների ուսումնասիրությանը։ Հետագա տարիներին նա զբաղվել է զգայարանների, վեգետատիվ նյարդային համակարգի և ուղեղիկի ֆիզիոլոգիայի մի շարք հարցերի ուսումնասիրությամբ, այդ թվում տալով մի շարք գեղեցիկ աշխատանքներ, որոնք վերաբերում են մաշկի էլեկտրական հատկությունների, սրտի էլեկտրահաղորդականության, աչքի արյան շրջանառության ներակնային ճնշման և այլի վրա սիմպատիկ ներվային համակարգի ազդեցությանը։

Նրա այդ բոլոր աշխատություններն իրենց արժանավոր տեղն են գտել սիմպատիկ նյարդային համակարգության ադապտացիոն-տրոֆիկական ֆունկ-

ցիայի մասին ակադ. Լ. Օրբելու ուսմունքի կառուցվածքում։ Պրոֆ. Ա. Մ. Ալեքսանյանը մեծ ուշադրություն էր նվիրում նաև էվոլյուցիոն մեթոդներին ֆիզիոլոգիայում։ Ուղեղիկի ֆիզիոլոգիայի վերաբերյալ նրա աշխատանքներում, որոնք ընդհանրացված են «Ուղեղիկի ֆունկցիաների մասին» մենագրության մեջ, օնտոգենետիկական հարուստ նյութի հիման վրա նա ցույց է տվել նորածին կենդանիների մոտ այդ օրգանի ֆունկցիոնալ ամբողջականության ու հասունության փաստը, ինչպես նաև ուղեղիկի պոստուրալ ու սենզոր ֆունկցիաների զարգացման մի քանի օրինաչափությունները օնտոգենեզում։ Նա առաջինը ցույց տվեց հիպոքսիայի, թթվածնի բարձր ճնշմանը և ստրիխնինով թունավորման պայմաններում ուղեղիկի նշանակությունը ֆունկցիաների կարգավորման համար։ Այդ աշխատության մեջ, ֆիզիոլոգիական ֆունկցիաների նկատմամբ լայն բիոլոգիական մոտեցման հիման վրա, նրա կողմից հայտնաբերվեցին օնտոգենեզում ֆունկցիայի էվոլյուցիայի ուսումնասիրման նոր մեթոդներ։ Ա. Մ. Ալեքսանյանը մի շարք հետաքրքրական աշխատանքներ է կատարել զգայարանների, կմաղքային մկանի և այլի ֆիզիոլոգիայի վերաբերյալ։ Նա Սովետական Միությունում առաջին փորձարար գիտնականներից մեկն էր, որը իր գիտական աշխատանքներում սկսեց լայնորեն օգտագործել հետազոտությունների էլեկտրաֆիզիոլոգիական մեթոդը։ Այդ աշխատանքներում Ա. Մ. Ալեքսանյանը ուշադրությունը կենտրոնացնում է կեղևի ու ենթակեղևային գոյացումների փոխհարաբերության հարցերի վրա, որոնք անմիջական առնչություն ունեն բարձրագույն նյարդային համակարգության գործունեության մասին Ի. Պ. Պավլովի ուսմունքի հետ։

Հարստանալով գիտելիքներով և, ամբողջությամբ առած՝ նյարդային համակարգության տարբեր ֆունկցիաների ուսումնասիրության մեթոդներով, Ա. Մ. Ալեքսանյանը զբաղվել է նաև բարձրագույն նյարդային համակարգության ֆիզիոլոգիական մեխանիզմների պրոբլեմի ուսումնասիրությամբ։ Սակայն, նաև այստեղ հետազոտությունների մեթոդոլոգիան մնում է նույնը— վեգետատիվ նյարդային համակարգության տարբեր ռեակցիաների՝ որպես կեղևի և մերձավորագույն ենթակեղևի ֆունկցիոնալ վիճակի ինդիկատորի հետազոտությունը։ Այդ մոտեցման շնորհիվ հայտնաբերվեցին մի շարք ֆունկցիաների, այն է սրտի գործունեության ու շնչառության ֆունկցիոնալ վիճակի օրգանիզմի իմունոլոգիական՝ռեակցիաների և այլի վրա գլխուղեղի կեղևի ազդեցության մի քանի մեխանիզմներ։ Նրա մի շարք աշխատություններ նվիրված են բարձրագույն նյարդային համակարգության հիմնական պրոցեսների ուսումնասիրությանը։

1958 թվականին, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահության հրավերով պրոֆ. Ա. Մ. Ալեքսանյանը Լենինգրադից վերջնականապես տեղափոխվեց Երևան և գլխավորեց ակադ. Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտը։ Նրա եռուն գործունեությունը, տաղանդը և մեծ կազմակերպչի փորձը նրան թույլ տվեցին մի քանի տարվա ընթացքում արմատապես բարելավել ինստիտուտի տեխնիկական հագեցվածությունը և խիստ բարձրացնել նրա գիտական արտադրողականությունը։ Նրա հմուտ ղեկավարությամբ ակադ. Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտական աշխատողների կոլեկտիվը ներկայումս դարձել է առաջատար գիտական ուժ, որը շարունակում է մշակել ակադ. Լ. Օրբելու գիտական ուսմունքը։

Պրոֆեսոր Ա. Մ. Ալեքսանյանը հեղինակ է ավելի քան 50 գիտական աշխատությունների։ 1959 թվականից նա Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ էր։

Իր ուժերի ծաղկման շրջանում մեզանից հեռացավ հիանալի գիտնականը, որը անհունորեն նվիրված էր իր գործին, ազնիվ, սկզբունքային և խիստ էր այն բոլոր դեպքերում, երբ հարցը վերաբերում էր իր հարազատ գիտությանը։ Մեզանից հեռացավ այն մարդը, որը անձնական մեծ հմայք ուներ, պարզ էր ու համեստ և կյանքում այնքան քիչ բան էր պահանջում իր համար։

Տաղանդավոր գիտնականի, հիանալի մարդու և քաղաքացու պայծառ կերպարը հավերժ կմնա մեր սրտերում։